



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 29.11.2013թ

2014թ.-ի ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել 2014թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական շինարարության/ տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

2/ սույն կետի „ա“ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 /տաս հազար/ դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ:

գ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ:

դ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, որժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն մինչև 3000 /երեք հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառված է 0.3 գործակիցը

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է`

1/ ոգելից և ավկոհուլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հինական և ոչ հինական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հինական և ոչ հինական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում`

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար` 20 /քսան / դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 100.000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

3/Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում 20.000/ քսան հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, գվարձանքի օբյեկտները ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության համար` ընթացիք տարվա համար սահմանվում է`

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 /քսանհինգ հազար/ դրամ:

2/ հանրային սննդի և գվարձանքի օբյեկտների համար 50.000 /հիսուն հազար/ դրամ:

3/ բաղնիքների /սաունաների/ համար 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ:

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

5/ շահումներով խաղերի կազմակերպման համար 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000 /հարյուր հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է`

1/ ավկոհուլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 1000 /հազար/ դրամ:

2/ թունդ ավկոհուլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3/ այլ արտաքին գովազդի համար` 1000 /հազար/ դրամ:

4/ համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել 700 /յոթ հարյուր/ դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար` ընթացիք տարում 3000 /երեք հազար/ դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները`

1/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ

մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10.000 /տաս հազար/ դրամ:

2/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողեր հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 /երեք հազար/ դրամ:


3/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 /երեք հազար/ դրամ:

4/ Արմաշ համայնքում սահմանել աղբահանության վճար մեկ շնչի հաշվով ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ: Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

Կողմ – 7 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

- 1. Ս. Աղամյան *Կողմ Ս. Աղամյան*
- 2. Ռ. Զեյնալյան *Կողմ Ռ. Զեյնալյան*
- 3. Գ. Համբարձումյան *Կողմ Գ. Համբարձումյան*
- 4. Բ. Մկրտումյան *Կողմ Բ. Մկրտումյան*
- 5. Բ. Շահնազարյան *Կողմ Բ. Շահնազարյան*
- 6. Մ. Շահվերդյան *Կողմ Մ. Շահվերդյան*
- 7. Յ. Պետրոսյան *Կողմ Յ. Պետրոսյան*

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



/կողմագրություն/

Հ.ԶԵՅՆԱԼՅԱՆ

/անուն, ազգանուն/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 29.11.2013թ.

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՌԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. / „Կառավարման մարմնի պահպանում,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի ծախսը պակասեցնել 1500.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 15649.7 հազ. դրամ:
2. „Սոց. անապահով անձանց,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածին ավելացնել 300.0 հազ. դրամ , ճշտված պլանը սահմանել 3099.0 հազ. դրամ:
3. Հանգիստ մշակույթ կրոն /այլ դաս/ գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 8, խումբ 5, դաս 1, ծրագիր 51/ տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածին ավելացնել 300.0 հազ. դրամ , ճշտված պլանը սահմանել 1100.0 հազ. դրամ:
- 4./Ջրային կառույցների պահպանում և շահագործում գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 6, խումբ 6, դաս 1, ծրագիր 55/ տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածի ծախսը պակասեցնել 1000.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 1000.0 հազ.դրամ:
5. Նախադպրոցական կրթություն գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 9, խումբ 1, դաս 1, ծրագիր 51/ տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին ավելացնել 700.0հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 700.0 հազ.դրամ, 5122 հոդվածին ավելացնել 500.0 հազ. դրամ ճշտված պլանը սահմանել 500.0 հազ. դրամ:

6. Վարչական օբյեկտների հիմնանորոգում գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագիր 52/ տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին ավելացնել 700.0 հազ. դրամ , ճշտված պլանը սահմանել 1700.0 հազ.դրամ:

7. Վ/բ -ից Ֆ/բ-ին հատկացման պլանը ավելացնել 900.0 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 5498.4 հազ. դրամ:

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

Կողմ – 7 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

- 1. Ս. Ադամյան *Կողմ Ս. Ադամյան*
- 2. Ռ. Զեյնալյան *Կողմ Ռ. Զեյնալյան*
- 3. Գ. Համբարձումյան *Կողմ Գ. Համբարձումյան*
- 4. Բ. Մկրտումյան *Կողմ Բ. Մկրտումյան*
- 5. Բ. Շահնազարյան *Կողմ Բ. Շահնազարյան*
- 6. Մ. Շահվերդյան *Կողմ Մ. Շահվերդյան*
- 7. Յ. Պետրոսյան *Կողմ Յ. Պետրոսյան*



ՅԱՆԱՅԵՆՆԻ ԲԵԿԱՎԱՐ

[Signature]
/ստորագրություն/

Հ.ԶԵՅՆԱԼՅԱՆ
/անուն, ազգանուն/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 29.11.2013թ.

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 1-ին „Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասերով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

26. Հաստատել Արմաշ համայնքի ղեկավարի աշխատավարձի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: /կցվում է/

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

Կողմ – 7 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

- | | | |
|---------------------|------|--|
| 1. Ս. Ադամյան | կողմ | |
| 2. Ռ. Զեյնալյան | կողմ | |
| 3. Գ. Համբարձումյան | կողմ | |
| 4. Ք. Մկրտումյան | կողմ | |
| 5. Բ. Շահնազարյան | կողմ | |
| 6. Մ. Շահվերդյան | կողմ | |
| 7. Յ. Պետրոսյան | կողմ | |



Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.ԶԵՅՆԱԼՅԱՆ

/անուն, ազգանուն/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 29.11.2013թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով Արմաշ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրային հողերից 400 ծածկագրից 15.16 հա , 175-001 ծածկագրից 7.71 հա և 25քմ բնակելի տարածք տալ վարձակալության յուրաքանչյուր հա-ի համար 7700դրամ վարձավճարով , յուրաքանչյուր քմ-ի համար 50դրամ վարձավճարով:

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

- | Կողմ – 7 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---------------------|---------|------------------------------|
| 1. Ս. Ադամյան | | Կողմ <i>Ս. Ադամյան</i> |
| 2. Ռ. Զեյնալյան | | Կողմ <i>Ռ. Զեյնալյան</i> |
| 3. Գ. Համբարձումյան | | Կողմ <i>Գ. Համբարձումյան</i> |
| 4. Ք. Սկրտումյան | | Կողմ <i>Ք. Սկրտումյան</i> |
| 5. Բ. Շահնազարյան | | Կողմ <i>Բ. Շահնազարյան</i> |
| 6. Մ. Շահվերդյան | | Կողմ <i>Մ. Շահվերդյան</i> |
| 7. Յ. Պետրոսյան | | Կողմ <i>Յ. Պետրոսյան</i> |



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

[Signature]
/ստորագրություն/

Հ.ԶԵՅՆԱԼՅԱՆ
/անուն, ազգանուն/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 29.11.2013թ.

ԱՎՏՈ/ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Գույքահարկի մասին „ Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Արմաշ համայնքի 2013թ. Բյուջեով նախատեսված ավտո/գույքահարկից արտոնություն սահմանել Վարդան Նորիկի Մարգարյանին 43169 /քառասուններեք հազար մեկ հարյուր վաթսունինը/ դրամ:

Ավագանու անդամներ՝ /ստորագրություններ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, նշելով բոլորի անուն, ազգանունները, ներառյալ բացակաները/

- | | | |
|---------------------|---------|------------------------------|
| Կողմ – 7 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
| 1. Ս. Աղայան | | <i>Կողմ Ս. Աղայան</i> |
| 2. Ռ. Զեյնալյան | | <i>Կողմ Ռ. Զեյնալյան</i> |
| 3. Գ. Համբարձումյան | | <i>Կողմ Գ. Համբարձումյան</i> |
| 4. Ք. Մկրտումյան | | <i>Կողմ Ք. Մկրտումյան</i> |
| 5. Բ. Շահնազարյան | | <i>Կողմ Բ. Շահնազարյան</i> |
| 6. Ս. Շահվերդյան | | <i>Կողմ Ս. Շահվերդյան</i> |
| 7. Յ. Պետրոսյան | | <i>Կողմ Յ. Պետրոսյան</i> |



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

[Signature]
/ստորագրություն/

Հ.ԶԵՅՆԱԼՅԱՆ
/անուն, ազգանուն/